

## ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԵՐԱԶԻ ՄԱՀՄԱՆԱԳԾԻՆ

### ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Նա բանաստեղծ էր: Իրավ՝ բանաստեղծ՝ կոչումով, էությունով, խառնվածքով և այն ամենով, ինչ հանձնում էր թղթին, որ կոչվում է ստեղծագործություն: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ ոչ մի տող չէր էլ գրել: Տասնչորսամյա Մուշեղը՝ Ճենտերեճյան ազգանունով, երբ մեկնեց Կիպրոս՝ Մելքոնյան կրթական հաստատությունում սովորելու փափագով, իր խոստովանությամբ՝ այնտեղ դասավանդող Հակոբ Օշականի «անունին հմայքն էր» իրեն «հոն քշողը» և բանաստեղծ դառնալու պատանեկան երազանքը: Երբ նոր ընդունվող պատանիները միմյանց հարցնում են, թե ով ինչ է երագում դառնալ ապագայում, Մուշեղի լուռ «պատասխանն» է՝ «կուզեմ անվարան պատասխանել, թե ճամփա ելած եմ բանաստեղծ ըլլալու համար, բայց կը քաշվիմ ըսելու»: Այդ երազանքին հասնելու առաջին փորձերը սկսվում են, սակայն, երկու-երեք տարի հետո՝ Բեյրութի ճեմարանում սովորելու տարիներին: 1932-ից սկսվում է տպագրվել մամուլում, 1936-ից լույս են տեսնում բանաստեղծական ժողովածուները մինչև... Վերջինս ավարտում է կյանքի վերջին օրերին, որ լույս է տեսնում մահվանից մեկ տարի հետո (1991):

Նա բանաստեղծ էր: Թող որ սիրելի ու արժեքավոր են նաև նրա դրամաները, արձակ վիպումները, թող որ նա սիրված մանկավարժ էր իր աշխատանքային գործունեության երկար ու բոլոր տարիներին՝ մինչ ի մահ, հայտնի դասագրքերի հեղինակ էր, գրականագետ ու խմբագիր, բայց ամենից առաջ նա բանաստեղծ էր՝ իր էությամբ, խառնվածքով, մտածումով, զգայություններով, իրականության զգայական ընկալումներով:

Իր անձը չէ (ես չեմ տեսել նրան), որ մղում է ինձ այդպես բնութագրել նրան, այլ իր ստեղծագործությունը՝ բոլոր ժանրաձևերով, իր բանաստեղծությունը՝ մասնավորապես:

Մուշեղ Իշխանի կյանքին ու գործին, մտորումներին, ասելիքին, նրա տեղին ու դերին Սփյուռքում ես անդրադարձել եմ վաղուց և քանիցս: Իմ մտորումը այսօր ընդամենը մի սևեռում ունի՝ բանաստեղծականը Իշխանի բանաստեղծության մեջ և ավելի մասնավոր մի խնդիր՝ երազի և իրականության հակադրամիասնության խնդիրը, որ նաև մի շատ կարևոր թելադրիչն է **բանաստեղծականության**: Բանաստեղծը կյանքի ու երազի սահմանագծին. հոգեկան պառակտումի, հոգեկան

դրամայի, հակադրության ու հաշտեցման մի իրավիճակ, որ անհանգիստ տրոփներ, հույզեր, տագնապներ է ծնում ու նաև հոգեկան խաղաղություն, փոխնիփոխ զգացումներ, որ բանաստեղծը պատմում է ընթերցողին, նրա առաջ բացում իր դրաման՝ իր տրտմությունն ու ցավը, իր երազը, սերն ու կարոտները, իր հավատը: **Ու հենց սա է բանաստեղծականը:** Եվ որովհետև անկեղծ ու անմիջական է բանաստեղծի «պատումը» (մենախոսություն թե գրույց), նրա խոսքը դառնում է զգայական, հաղորդական, հարազատ ու փոխանցվող:

Ահա ուրեմն **բանաստեղծը կյանքի ու երազի սահմանագծին: Կյանքը**, հասկանալի է, իրականությունն է, այն տեղը, միջավայրը, որտեղ ապրում են բանաստեղծը, ժամանակը, մարդիկ, անձնական, հասարակական ու քաղաքական հարաբերությունները՝ իրենց թելադրանքով: (Ամենակոպիտ ասված՝ սա ռեալիզմն է պատկերավորման արվեստներում:) Բայց ահա **Երազը** պայմանավորված չէ որևէ թելադրանքով, ավելին՝ նրա հակոտնյան է: Երազը ազատ կամքի արտահայտություն է, «տեսողական երևակայություն» ու տեսանելի է միայն քեզ, քո մտքում է պատկերված, ինչպես Չարենցն էր ասում՝ «ուղեղիս լաթի վրա», ուղեղի էկրանի պաստառին: Կարող ես երբեմն էլ բարձրաձայնել, գրել, պատկերել, եթե, իհարկե, քաղաքական կամ այլ արգելանքներ չկան: Քո մտքի, քո երևակայության մեջ դու ազա՛տ ու ազատ ես:

Չմոռանանք տարբերակել այս մտովի, արթմնի երազը քնի մեջ տեսած երազից, որ մենք տեսնում ենք անկախ մեր կամքից, երազներ, որ կարող են լինել մեր ցերեկային կյանքի կամ արթմնի երազների կրկնությունը կամ ցանկալի շարունակությունը, բայց և կարող են լինել ծանր, մղձավանջային, խառնիխուռն, անկապակից, ֆանտաստիկ: Քնի մեջ տեսած երազների մասին մի ամբողջ գիտություն կա՝ օնեփրոլոգիան, բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել, կրոնական, փիլիսոփայական, գիտական բացատրություններ են տրվել: Սա մեր խնդիրը չէ:

Մեր խնդիրը արթմնի երազն է, որ անվանվում է նաև **Երազանք** տարբերակով, որ ըստ էության **երազ** արմատով և ածանցված նույն բառն է և որ այլ նրբերանգներով շատ հոմանիշներ էլ ունի՝ **ցանկություն, իղձ, ըղձանք, տենչանք, տեսիլ, անուրջ, անրջանք, պատրանք...**

Երազանքը ուրեմն արթմնի տեսածն է, թեև քնի մեջ տեսած **Երազից** է առել իր անունը, բայց նախածինը երազանքն է, ցերեկվա կյանքը, ցանկությունները, որ երբեմն էլ «իրականանում», հասանելի են դառնում քնի մեջ: Հիշենք թեկուզ միայն Ս. Շահազիզի «Երազը».

*Ես լսեցի մի անուշ ձայն, -  
Իմ ձերացած մոր մոտ էր...  
... Կրծքին սեղմեց կարոտագին,  
Աչքերս սրբեց - շատ թաց էր...*

*Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր...<sup>1</sup>*

Օրվա կարոտները, անհանգստությունները, հիշողությունները, սիրելի դեմքեր ու հանդիպումներ՝ տեղի ունեցած և հատկապես երազած, տեսնում ենք մենք երազում, ուրախանում, հուզվում, ինչպես կյանքում: **«Բայց երազն ի՞նչ է»,** – խորհում էր իմաստասեր Թումանյանը.

*Երազ, թե իրոք - այդ միթե մի՞նչ է,  
Երազն էլ երբ որ կարող է կանչել,  
Կարող է հուզել, խընդացնել, տանջել...  
Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք,  
Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք...<sup>2</sup>  
(«Ռեպի անհունը»)*

Անշուշտ, ազդակներ ստանալով իր ուսուցչից՝ երիտասարդ Չարենցը իր ցերեկվա երազ-տեսիլը «տեղադրեց» քնի մեջ տեսած երազում («Ազգային երազ»)՝ հիշեցնելով ընթերցողին ու հենց իրեն, թե «չի տարբերվում կյանքը երազից», թե՛

*Միրաժ է կյանքը, երազ ու տեսիլ –  
Քո այդ երազում դու կյա՛նքն ես տեսել:  
Կյանքը աշխարհում մի երազ է հենց,  
Օ՛, ցնդած պոետ Եղիշե Չարենց...<sup>3</sup>*

«Անուշ երազ»-ից արթնանալիս մենք բոլորս ենք մտովի կրկնում Շահազիզի «Երազի» վերջնատողը՝ **«Բայց ափսոս որ երազ էր»:** Որ կարճ տևեց, որ ցնդեց, կորավ:

Բայց արթմնի Երազը՝ Երազանքը, որ «տեսողական երևակայություն է», կարող է լինել ոչ միայն պահի մեջ կամ կարճ ժամանակի, այլև տևական, կրկնվող: Երազանքն իր բոլոր հոմանիշների (իդձ, տեսիլ, անուրջ, պատրանք) երանգներով դրսևորում է գտել հայ նոր շրջանի բանաստեղծության մեջ, ուզում եմ ասել՝ Մուշեղ Բշխանից առաջ, ու կապ չունի, թե իրապաշտ են այդ բանաստեղծները, վիպապաշտ, թե խորհրդապաշտ: Հիշենք միայն անուններ, վերնագրեր ու տողեր՝ առանց մեկնության: «Վեր է կացել էն սարում // Մեր Չալանկը իր թևից, // Գընում է մութ անտառում, // Քաջ ախպերըս էտևից» (Հ. Թումանյան, «Պատրանք»): «Մշուշի միջից, – տեսիլ դյութական, – բացվում է կրկին Նաիրին իմ դեմ», «Տեսա երազ մի վառ, // Ոսկի մի դուռ տեսա...» (Վ. Տերյան): «Իջն ք, իջն ք երազներ, անուշ, քնքուշ երազներ...», «Ես պատրանքը սիրեցի...» (Լ. Շանթ): «Երազում եմ ես լուսավոր մի գետ, // Մարմարյա տներ ափերին նրա, –// Շրջում են շուրջս չքնաղ աղջիկներ...» (Ե. Չարենց, «Nostalgia»), «Փակում եմ հոգնած աչքերս մի պահ // Եվ տեսնում եմ ես – այնքա՛ն, այնքա՛ն պարզ...»։ «Գանգրահեր տղայի» ամբողջ ե-

<sup>1</sup> «Մարգարիտներ հայ քնարերգության», հ. երկրորդ, Եր., 1974, էջ 50:

<sup>2</sup> **Հովի. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1989, էջ 114:

<sup>3</sup> **Եղիշե Չարենց**, Երկերի ժող., հ. 2, Եր., 1963, էջ 66:

րագ-տեսիլը՝ այնքան իրական ու պայծառ պատկերը ապագայի Երևանի: Եվ «սպասման հիվանդ» Մեծարենցին հիշենք, որ կարող էր երագել մենակության պահերին, մութ գիշերին՝ համոզումով, թե *«Գիշերին մեջ չէ՞ ապաքեն, որ երագները ավելի վառ ու արագ վերթնումներ կունենան»*, ու հենց գիշերը այնքան պարզ տեսնել հեռավոր բնապատկերը՝ *«Դաշտի ճամփու մը վրան կամ ստորոտը լերան»* հյուրընկալ «հյուղակը»: Կամ՝ Ռուբեն Սևակի՝ սիրած աղջկան ուղղված ձոներգի երագ-տեսչանքները՝ *«Դուն հրաշքն ես, դուն երագն ես, դուն Սերն ես»* («Գինով սեր»), երևակայության մեջ փոփոխվող տեսլապատկերները՝ *«Երազ, տեսիլ, անզո ստվեր մանհոգի // Ճառագայթի, փրփուրի խաղ մը տարտամ»*, և հանդիպման, գրկախառնումի մտապատկերը («Երգ երգոց»): Եվ Վարուժանի «Գրգանք» բանաստեղծության բնապատկերը՝ երևակայությամբ ստեղծված, մենավոր լճակի ափին «կախարդորեն շինված» տնակը, հեթանոս հովվին, որ տենչագին սպասում է սիրած հովվուհուն, գրգարանը, կարասները լճակի վրա և սիրով բռնկված մի ողջ բնություն:

Մուշեղ Իշխանը ավանդներին հավատարիմ բանաստեղծ էր և սիրելի ու մեծապես գնահատել է իր նախորդներին, նաև նրանց, որ իր ժամանակակիցներն էին, իր անմիջական ուսուցիչները: Վկայություն «Իմ ուսուցիչներս» գիրքը և «Հայ գրականության» երեք հատոր դասագրքերը բարձր դասարանների աշակերտների համար:

Եվ Երագը՝ որպես բանաստեղծության անբաժան հատկանիշ, նա կարող էր ժառանգել նաև իր ուսուցիչներից: Բայց Երագը ծնունդն է իրականության ու ժամանակի, և Մուշեղ Իշխանը նոր ժամանակների բանաստեղծն էր: Միյուրքի, իր խոսքերով՝ «Հայաստանի տարագիր բանաստեղծը»: Եվ նոր ժամանակներն ու իր գոյավիճակը պայմանավորում են բանաստեղծի Երագի մի ուրիշ վերապրում, ըղձանքի մի ուրիշ կարոտ, կարոտի մի ուրիշ նրբերանգ, իրականության ու երագի հակադրության ու հաշտեցման, մեկը մյուսով պայմանավորելու, կյանքը իմաստավորելու մի նոր մոտեցում: Չմոռանանք նաև անհատականության գործոնը, մարդկային տեսակը, ի ծնե, ժառանգաբար, արյունով ստացածը:

Մուշեղ Իշխանի պոեզիայում Երագը ոչ թե թևածում է *«որպես քնքուշ մութի թև»*, այլ սփռվում է, կենդանանում, կերպավորվում է ու կարևորվում՝ որպես ապրելու պայման, արդարացում, դիմադարձություն կյանքի տառապանքին (պատահական չէր մի ամբողջ ժողովածուի հրատարակումը *«Տառապանք»* խորագրով): Իր կյանքի մայրամուտին գրված՝ *«Եթե հարցնեն»* բանաստեղծության մեջ իր պոեզիան, իր անձը բնութագրող պատասխաններ ունի Իշխանը. եթե իր մահից հետո հարցնեն, թե իր ապրած տարիներին աշխարհի անթիվ գանձերից բանաստեղծը ինչն էր որոնում, *«ըսեք դարձավ բանաստեղծ և ամենուր որոնեց բարին»*, ինչո՞վ գինովցավ, պատասխանն է՝ *«կրեց բազում վիշտ»*

**ու ցավ և զինով մնաց երազով անծիր»:** Դժվար կյանքի («վիշտ ու ցավ») և «անծիր երազի» մշտապես համադրումը հենց այն է, որ մղել է մեզ այս դիտարկումը վերնագրել **«Բանաստեղծը կյանքի և երազի սահմանագծին»:** Հենց այն դրաման է, որ ծնվում է հոգեկան պառակտումից՝ ապրել «ո՞ր աշխարհում է, էս թե՛ էն»։ Երկփեղկված հոգի՝ իրական իրականության և երազելի Երազի միջև։ Որտե՞ղ գտնել ապաստան, որի՞ն ապավինել։ Հակադրե՛լ, թե՛ հաշտեցնել։ Կյանք, **թե՛** երազ։ Թե՛ կյանք **ու** երազ՝ հակադի ր, թե՛ համադիր կացություն։ Համաստեղի՝ նույն տարիներին գրված «Հայաստանի լեռներու սրնգահարը» դրամայի հայ հերոսները ապրում են Ամերիկայի Մեյն նահանգի գյուղերից մեկում, բայց իրենց երազների, տեսիլների մեջ, որ ասես իրական են, հայրենի լեռներն են, հայրենի երգը։ Խառնված են իրականն ու երազը, քնի մեջ տեսած երազն ու արթմնի երազը։ Եվ այս դրաման հեղինակը ընծայագրել է՝ **«Նվեր Ամերիկահայության, որ ձերացավ աչքերուն մեջ բռնած կարտոթը երկրին, որ ապրեցավ, երազեց ու երազով դարձուց իր կյանքն իրական»<sup>4</sup>:** Իսկ Մուշեղ Իշխանից ոչ շատ առաջ Վահան Թեքեյանը՝ կյանքի փորձը արդեն կուտակած իր գրական ուսուցիչը, պիտի հարց տար, երկմտեր, քններ՝

*Ապրի լ թե ոչ երազել, – չըլուծեցինք հարցը դեռ.  
Վայելքը ո՞ւր փնտրո՞ւն, երազի՞ն մեջ թե կյանքին,  
Չըվճռեցի նք տակավին...*

*.....*  
*Զի երազին վերքերուն չեղավ կյանքը բալասան,  
Եվ հոգնության ալ կյանքին չեղավ երազն ապաստան.  
Չառինք երազ մը կյանքեն, ու երազեն չառինք կյանք...<sup>5</sup>  
(«Ապրի լ թե ոչ երազել»)*

Իսկապես, որտե՞ղ գտնել վայելքը, փրկությունը, ապաստանը, հարցը լուծելի չէ, բայց հոգուց անբաժան է փնտրումը։ Իշխանի համար կարծես թե չկա այս երկվությունը, չի բաժանում **«իրարմե ճշմարտություն և պատրանք»:** Երկփեղկված հոգին կյանքի ու երազի միջև փորձում է հաշտեցնել հակադիր բնեռները, ավելին՝ պայմանավորել մեկը մյուսով. կյանքի տառապանքն է ծնում Երազը, և Երազն է, հատկապես Երազը, մղում տեսնելու կյանքի, բնության գեղեցկությունները (**«Դիտեց կյանքը և կարտոթս սիրեց գայն»**) և նվիրվել մարդկանց (**«Ողջույն քեզ, կյանք»**): Միրել կյանքը **«սիրով անսահման»**, հոգին դարձնել **«վառ կանթեղ»** // **Որ լույս տա մարդկանց դեռատի ու ձեր»:** Պարտադրված կյանքի հոգաշատ օրերի ծանր բեռը տանելու համար խթանիչ ուժը հենց Երազն է, որովհետև երազագուրկ հոգիները թույլ են ու անգոր, գուրկ են թռիչքներից, դատապարտված են մոռացման, ավելին՝ կորստյան.

<sup>4</sup> **Համաստեղ**, Հայաստանի լեռներու սրնգահարը, Եր., 1989, էջ 641:

<sup>5</sup> Վ. Թեքեյան, Գաղտնի պարտեզ, Բեյրութ-Երևան, 2003, էջ 222:

Հոգին աներազ՝  
Աստուծո լուսեղ  
Տաճարին մեջտեղ՝  
Յուդասպատ կանթեղ:

Հոգին աներազ՝  
Կորսված հին բույն  
Ուր ոչ մեկ թռչուն  
Կը բերե գարուն:

Հոգին աներազ՝  
Հովերուն դիմաց,  
Կայմաբեկ նավեն  
Առկախ առագաստ:

Հոգին աներազ  
Լքավեր ու գորշ  
Բերդի մը ճակտին  
Մոռցված դրոշ...<sup>6</sup>  
(«Հոգին աներազ»)

Երազի այս կարևորումը, անշուշտ, տարագիր բանաստեղծին սահմանված իր՝ տարագիրի կյանքի թելադրանքն էր, բայց նաև մարդու իր տեսակի՝ երագող հոգու խառնվածքի արտահայտություն: Ու երևի թե Իշխանը միակն է մեր բանաստեղծներից, որ ոչ միայն պատմեց իր երագների մասին, երագողի իր հոգին բացեց ընթերցողի առաջ, այլև փորձեց կերպավորել՝ այդ երագը, անձնավորել, գրել մեծատառով, գրուցել նրա հետ, ավելին՝ այդ գրույցները, մտորումները, վերապրումները միավորել մի կառույցի մեջ, որպես առանձին գիրք, շարք՝ «Կյանք և երագ» խորագրով: (Նկատենք, որ հակադիր բնեռները նա միացնում է նշաղկապով՝ որպես կողք կողքի գոյակցություններ:): Շարքը պատրաստ էր տպագրության 1941-ին, բայց հրատարակվեց ուշացումով՝ 1949-ին: Պատճառը, անշուշտ, Համաշխարհային պատերազմն էր, հայության ճակատագրի նոր տագնապները և «Հայաստան» պոեմի ծնունդն ու հրատարակությունը, պոեմ, որ բանաստեղծի՝ հին ու նոր հայրենիքի յուրօրինակ տեսիլ-երազի ընդարձակ քնարական կերպավորումն է և լրացնում-ամբողջացնում է կյանքի ու երագի գուգադրման մտահղացումը, թեև դրանք, այդ երկու գրքերը հոգեկան ու հոգեբանական տարբեր վիճակների դրսևորումներ էին: Թեև գրեթե մեկ տասնամյակ ուշացած, բայց «Կյանք և երագ» գիրք-շարքը ուշացած կամ ժամանակավ-

<sup>6</sup> Մուշեղ Իշխան, Երկեր, Եր., «Նաիրի» հրատ., 1990, էջ 135: Մնացած բոլոր մեջբերումները Իշխանի բանաստեղծություններից քաղված են այս ժողովածուից, հետևաբար կնշենք միայն էջերը:

րեպ չէր և սիրով ընդունվեց ընթերցողի կողմից, որովհետև բանաստեղծի Երազը նաև նրա երազն էր, 1930-ականների վերջերին, թե՛ 1940-ականներին, թե՛ հետագա տասնամյակներին: Բանաստեղծի երազը՝ անունով թե անանուն, սկիզբ էր առնում առաջին գրքից (**«Տուներու երգը»**)՝ կորցրած ու գտնելիք հայրենական տան բաղձալի տեսլապատկերով.

*Մեր անհուն սիրո նվաղանքին տակ  
Աչքերս հաճախ մեղմիվ կրփակվին,  
Եվ ամեն անգամ կը տեսնեմ հստակ  
Մեր կյանքով լեցուն տուն մը մտերիմ:  
Նուրբ ու սպիտակ տուն մը մեկ հարկով  
Կեցած անտառի բլուրին վրան  
Եվ իր դեմ հեռո՛ւն՝ դաշտեր, ծառ ու ծով (էջ 31):*

«Թախիծի սև ժամերին» բանաստեղծի համար փրկողակ է հեռավոր հայրենի տան տեսիլը, նրան է դիմում՝ «Կորուսյալ տուն, իմ առջև // Տեսիլքն ես դու բախտորոշ», խոր հուսահատության պահերին՝ «Հենավո՛ր ր տուն, ինձ դարձյալ // Դո՛ւն կուտաս կյանք ու հավատ» (էջ 30): Եվ «քա՛ղցր է ապրիլ, պայքարել անվերջ// Այդ տան երազով» (էջ 33), տուն, որ թեև դարձել է «հեքիաթի ապարանք»՝ «անմատույց, հեռացած», բայց զգում է նրան մշտապես մոտիկ, որովհետև բոլոր սերերից **«գերիվեր»** է տան սերը՝ «Ո՛վ տան սեր, մե՛ծ հրայրք ճշմարիտ և անանց» (**«Տան սեր»**, էջ 46), որովհետև մշտատև է այդ երազը. «Ահա նորեն քեզ համար կայրի հոգիս այս գիշեր...// Ահա նորեն կը կանչես զիս դեպի տուն, դեպի վեր...» (**«Տանս կանչը»**, էջ 52):

Արդեն այս առաջին գրքում կարևորվում էր տեսլականը՝ պայծառ Երազը՝ իբրև ելք կյանքի դժվարագույն պահերին: Եթե «Կյանքի անապատին մեջ անծայր» այլևս հուսահատ լինես, խորհուրդ է տալիս բանաստեղծը իրեն ու մեզ, «Դուն նորեն մի շտ ունեցիր հեռուն տեսիլքը պայծառ // Ովասիսին մեջ փոված մեծ ու փարթամ քաղաքի» (էջ 23), եթե անգամ մութ ամպեր գան ու ծածկեն «տեսիլքն աչքերուդ», «դուն անվհատ վերաշինես զայն նորեն» և՝

*Մի՛ հարցներ դուն երբեք, – ո՛րն է իրավ, ո՛րն ունայն,  
Չկա ժպիտ, արբեցում առանց ոսկի երազի  
Եվ դուն գիտե՛ս, որ կյանքն ալ կարժե երազ մը միայն (էջ 24):*  
(**«Անապատին մեջ կյանքի»**)

Վերադառնալով «Կյանք և երազ» շարքին՝ ասենք, որ այն ունի հստակ կառույց. մուտք, երեք ենթաշարքեր՝ իրենց բնորոշ բնաբաններով, որ քաղված են տվյալ ենթաշարքի բանաստեղծություններից, որոնք էլ ասես դառնում են տառերով (Ա, Բ, Գ) բաժանված ենթաշարքերի խորագրեր:

Շարքի մուտքի բանաստեղծության մեջ Իշխանը հաստատում է մեր խոսքի սկզբում ասված այն միտքը, թե բանաստեղծի Երազը՝ Երա-

զանքը, տեսլանում է հենց արթմնի պահերին: Ավելի ճիշտ՝ մենք ենք մեր միտքը ընդհանրացնում նրա ու մյուսների հաստատումներով: Իշխանը շարքն սկսում է այսպես.

*Ո՛չ երեկո, ո՛չ մեղսակից կիսամութ.*

*– Ես կերագեմ կանգնած լույսին մեջ պայծառ,*

*Ո՛չ քունի ժամ, ո՛չ քնաբեր քաղցր սուտ.*

*– Աչքերուս մեջ կիյնա երկինքն անդադար (էջ 115):*

Ու նաև ուշադրություն դարձնենք այստեղ իր այլ հաստատումներին. «Երագն իմ բույժն եղավ համայն խոցերուն...», ապա՝ իր երագանք-ցնորքը մշուշոտ «ցուրտ» ու «ամուլ» չէ, այլ՝ «Երագներու մեծահանդես բնակիչ // Ունիմ կյանքեր, խոսք ու երգեր լուսավանկ»: Եվ երագելու ձևը՝ անկեղծ, սրտաբուխ, ինքնամոռաց. «Ես կերագեմ ինչպես մանուկը կուլա // Եվ կաղոթե խոովահույզ արեղան»:

Եվ երագի այս մեկնակետից շարքի երեք մասերում նա հյուսում է քնարական հերոսի մի կենսագրություն, որ նաև իրենն է, կյանքի և երագի սահմանագծում նա կերպավորում է քնարական մի հերոսի, որ փոքր հասակից («Հեքիաթեն վերջ մամիկիս») որոնել է հեքիաթի «հրաշագոր մատանին», մինչև հասուն տարիք, եղել է ամենուր, իր կյանքի ճանապարհին հարցրել է ամենքին ու չի գտել «հեքիաթի մատանին»: Անմիջաբար, սկզբնապես, հենց երկրորդ բանաստեղծության մեջ նա հիշեցնում է այդ հերոսի (հենց իր) ազգային պատկանելությունը՝ **«Ես գավակն եմ Հայաստանի»**, Հայաստանի, **«Որուն անունն է առասպել ու վառ երագ // Սերունդներու կարոտամաշ հոգիեն ներս»**, դրանով, ասես, նախապատրաստում է ընթերցողին՝ հավատալու հերոսի դրամային, նրա երագին և հուսալքություններին միաժամանակ: Քնարական հերոսին, որին ներկայացնում է առաջին դեմքով, երբեմն էլ՝ երրորդ (**«Կար պարմանի մը տժգույն»**, **«Կյանքն իր երագ մը եղավ...»**), ներկայացնում է որպես մեկը, որ ապրեց երկփեղկված սրտով և որ չկարողացավ իրարից բաժանել **«Ճշմարտություն և պատրանք»**:

*Կյանքն իր երագ մը եղավ, ինչպես երագն՝ իրեն կյանք*

*Համատարած, մտերմիկ, բայց հավետ նոր ու անհուն,*

*Իր այվըներն անձանոթ ճաճանչներով հմայուն՝*

*Չբաժնեցին իրարմե ճշմարտություն և պատրանք (էջ 118):*

**«Կյանքն իր երագ մը եղավ»** վերնագրով քառամաս բանաստեղծության այս քառատողի առաջին տողը բանաստեղծը դարձրել է ենթաշարքի բնաբան, որը հստակորեն սահմանում է քնարական հերոսի էությունը և ենթաշարքի մեկնության բանալին է՝ **«Կյանքն իր երագ մը եղավ, և երագն՝ իրեն կյանք»**: Դարձվածը, անշուշտ, հիշեցնում է Թումանյանի բանաձևումը՝ **«Կյանքը երագ է, երագն էլ մի կյանք»**, Չարենցի տողը՝ **«Կյանքը աշխարհում մի երագ է հենց»**, բայց Իշխանի ընդհանրացումն ուրիշ արթմնի երագի, երագանքի մասին է, ու նաև՝ երկուսն էլ (**«Ճշմարտություն և պատրանք»**) հավասարապես ընդունելու՝ հավա-

տալով, թե Երազը անհրաժեշտ մի պայման է իրականության մեջ ապրելու, պայքարելու, արարելու և հենց այդ Երազը իրականություն դարձնելու համար:

Հենց այս ենթաշարքում Երազի (երազանքի) մասին բանաստեղծի խոհը ծավալվում է մի շարք բանաստեղծություններում («Երազային», «Օր մը իջավ երկինքեն», «Երազին», «Եթե», «Որպեսզի դուն մնաս միշտ վառ»), ավելին՝ Երազը կերպավորվում է, բանաստեղծը դիմում է նրան՝ որպես գոյության, գրում է մեծատառով:

*Հանդիպելի՛ր ինձ դարձյալ խարտիշագեղ իբրև կին  
Լուռ իրիկուն մը հանկարծ, ճամբուս վրա, բախտի՛ պես.  
Կյանքը և դուն ձուլվելիք իր հասակին մեջ նրբին,  
Լիալուսինը սիրո ողողեր մայթ ու պարտեզ (124):*  
**(«Երազին»)**

Կնոջ կերպարանքով այս երազը ինչ-որ առումով թերևս հիշեցնում է Տերյանի «Տխրությունը», միայն թե խորհրդապաշտության կանոններով՝ Տերյանը տխրությունը մարմնացնում է **«Ճերմակ շորերով»** գունատ աղջկա տեսքով, որ ավելի շատ ուրու է, **«անուրջ կույս»** անշոշափելի, անցնում է **«աննշմար, որպես քնքուշ մութի թև»**, մինչդեռ Իշխանը դիմում է հենց Երազին՝ կերպավորվելու **«խարտիշագեղ կնոջ»** տեսքով, ավելին՝ ուզում է՝ **«Կյանքը և դուն (Երազը - Վ. Գ.) ձուլվելիք իր հասակին մեջ նրբին... Եվ անունիդ հումանիշ քյար անունն իր անգին...»**:

Բանաստեղծը պասիվ երազող չէ, ավելին՝ պայքարում է Երազի համար, պաշտպանում է, «բերդ» է նրա համար:

*Որպեսզի դուն մնաս միշտ վառ,  
Մանկութենես մինչև այսօր  
Ես կյանքս ըրի անդուլ պայքար  
Ուժերու դեմ գերահզոր:*

*Մերթ տիրական, մերթ տարուբեր  
Ալիքներու մեջ լեռնադեզ,  
Ես քեզ ուժգին բռնեցի վեր,  
Խեղդըվող մոր գավակին պես...*

*...Ոչ մեկ ընկեր ունեցար դուն.  
Բայց միայն ես քեզի տաճար,  
Ես քեզի բերդ, աստեղատուն,  
Պահեցի քեզ սուրբ ու պայծառ... (էջ 127):*  
**(«Որպեսզի դուն մնաս միշտ վառ»)**

Իսկ ահա շարքի երկրորդ ենթաշարքում մի ուրիշ հոգեվիճակ է: Կյանքն է՝ իր պարտադրանքներով, հարվածներով, թախիծով ու թուլնով, երազող հոգիներից վրեժ լուծող (**«Կյանքն իր վրեժը լուծեց»**), Կյանքը, որ բերում է տրտմություն, խոնջանք, բերում է անձրևի երգը՝ **«Աշ-**

*նանային բյուրեղաշիթ վիշտը գով»,* հայրենական երազների փլուզում (*«Զի աչքերուս առջև չելավ ոչ մեկ տեղ // Հայրենական ջինջ հայելին Մևանի»,* էջ 133), զգացումը Կյանքի երկաթե բազուկի, որ ծանրանում է իր վրա այնքան, որ Երազի հպումն էլ կրում է նույն ծանրությամբ: Եվ բանաստեղծը սգում է իր «անանուն երազի» մահը (**«Մուգ»**):

*Մեռավ ան, իմ երազն անանուն.*

*Իսկ երեկ ինձի հետ, իմ առջև*

*Կը քալեր հրեղեն իբրև սյուն,*

*Իսկ այսօր կը փովի շուքս սև...*

*Ո՞վ խոցեց, ո՞ր նետով ինկավ ան... (էջ 134):*

Ասում է թանկագին շատ մահեր իր ճամփին **«անարցունք»** է թաղել, քանի որ Երազը **«ժպտագին» «հեռուն կը կանչեր միշտ»** իրեն, բայց մահը Երազի (**«իմ հավատքս ու հոգիս»**) սգում է դառնագին, ու թեև **«անհուն է նրա գերեզմանը»,** ինքը տեսնում է **«մահաստվերն ամենուր – սարերու կատարին», «ջուրերու ծփանքին մեջ», «ծաղկալույս դաշտերուն»:** Եվ բոլոր բոլորը՝ **«կրպարզեն իր մահվան սուգը խոր...»** (էջ 135):

Այս բանաստեղծության առաջին տողը՝ **«Մեռավ ան, իմ երազն անանուն»,** դարձրել է բնաբան այս ենթաշարքի, որ միանգամայն ճիշտ է ներկայացնում ենթաշարքի ասելիքը:

**«Սուգին»** հաջորդում է **«Հոգին աներազ»** բանաստեղծությունը, որ արդեն հիշել ենք որպես երազ չունեցող, երազագուրկ հոգիներին տրված խորհուրդ: Այստեղ իրապես այն ուղղված է հենց իրեն, քնարական հերոսին, որի երազն արդեն մեռել է, ինքը սգակիր է, թևաբեկ, թույլ ու անգոր, լքված և հուսահատ: Եվ հաջորդ վերջին երկու բանաստեղծությունները (**«Մահացում», «Մեռած երազներ»**) նույնպես այդ հոգեվիճակի վկայություններն են, հաստատումը այն ճշմարտության, թե առանց երազի մարդը մեռած է.

*Ղու գիտես, Տե՛ր, թե ես մեռած եմ արդեն,*

*Մեռած անշունչ՝ ինձի համար և մարդոց*

*Ու ես գիտեմ, թե երկնքիդ խորեն գոց*

*Ա՛լ չի ծաթիր հարության շող ինձ նորեն (էջ 136):*

Բայց բանաստեղծը, այնուամենայնիվ, չի ուզում հաշտվել «մահացումի» հոգեվիճակի հետ և Տիրոջից խնդրում է.

*Եթե ինձմե առիր թո՛հչքս նախկին,*

*Որ եթերին մեջ կը բացվեր տիրական՝*

*Տո՛ւր ինձ, Աստված, թափահարումը միայն՝*

*Լուսակարոտ հաշմ թևերու ցավագին...*

*Բայց մի՛ թողուր մնալ այսպես դուն ինձի՝*

*Իմ դիակիս մեռելաթաղ սիրալիր... (էջ 136):*

Ու եթե չի հաշտվում, ուրեմն կարոտը դեռ մեռած չէ: Եվ շարքը չէր կարող ավարտվել այս նոտայով: Ու կրկին տեղի է ունենում վերադար-

ձը Երազին **Էրրորդ Էնթաշարքում**, որ բնաբան ունի «**Ե՞րբ ստացավ իմ հոգիս մրգահասի լիությունն**» տողը՝ քաղված «**Մրգահասի լիությունն**» բանաստեղծությունից: Վերադարձը տեղի է ունենում երազած կյանքի, երազի ճանապարհի որոնումով, որ նա գտնում է անտառի, պարտեզի, ծառերի, պարտիզայանի, մրգահասի ու դարձյալ «վառ երազի» ներկայության մեջ, որ կյանքն է՝ իրական գեղեցկություններով, նվիրումի, գոհաբերման խորհրդով.

*Ե՞րբ ստացավ իմ հոգիս մրգահասի լիությունն,  
Ինչպես պտտողը ծառին և անոր չափ մեղրահամ,  
Ջոհաբերման սեղանեն ամառնային դաշտերուն՝*

*Այնպես պատրաստ իյնալու, բաշխվելու և ամեն ժամ... (էջ 148):*

Մեծարենցյան բնապատկերների ու բնապաշտության, անանձնական սիրո, նվիրումի, «ըլլայի»-ների հուշումներով՝ ամենքին «**բաշխվելու և ամեն ժամ**» այս ցանկությունները նախորդում են «**Երազի ճամբան**» «**Ծաղկավետ բլուրի կողն ի վար**» (դեպի կյանք) գտնելուն.

*Այս ճամբեն կը բավե, որ քալես  
Իբրև պարզ կիսաստվեր, իբրև ծառ  
Ու շրջիմ բլուրի կողն ի վար  
Դուն այնտեղ կըսպասես ժպտադեմ... (էջ 145):*

Ուրեմն երազը պետք է փնտրել կյանքում.

*Ե՛ւ եմ Երազը կենդանի.  
Դարձեք ինձի, վերադարձե՛ք անհամբեր,  
Կարոտներու տարահալած թռչուններ,  
Հասե՛ք աղբյուրն հրաշքի:  
... Ինձի՛ եկեք, օ, եկեք տուն...*

Ու կրկին երազը մեծատառով է և գոյավորված, ու կրկին՝ իրեն անբաժան ուղեկից: Ավելին՝ մարմնավորված է իր իսկ կերպարով՝ «**Ե՛ւ եմ Երազը կենդանի...**»: Ինքն է՝ սավառնող երազների, կարոտների «**տարահալած թռչունների**» բույնը, տունը՝ «**աղբյուրն հրաշքի**» (վարուժանյան հուշումով), ուր կանչում է նրանց՝ «**Դարձեք ինձի, վերադարձե՛ք տուն**», ինչպես Մեծարենցն էր դիմում «**ջրանույշ պայիկներին**», «**իրիկվան հովիկներին**»՝ ետ բերել «**ծփանուտ Երազիս սփունքեն**» «**հեռացած նավակները**»՝ «**դարձուցե՛ք նավակներս հողմավար...**»<sup>7</sup>: «**Տենչանքներըս, տարագնացիկ մեղուներ... թրռան գացին երամ երամ**», «**Դեռ կըսպասեմ անոնց հևքոտ ու մեղրագոծ վերադարձին**»<sup>8</sup>, ասում էր Մեծարենցը, «**Վերադարձեք**, - կանչում-համոզում է Իշխանը, - **Կարոտներու տարահալած թռչուններ...**»:

Նաև պատահական չէ, որ շարքն ավարտվում է Երազի կրկին կարևորումով, հենց կյանքի ճանապարհին, նախ՝ իբրև արբեցում («**Գիտվր**»).

<sup>7</sup> Մ. Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1981, էջ 62:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 63:

*Գինովն էր ան ճշմարիտ, արբեցած լոկ երագով-  
Միակ գինին անարատ,  
Նյութերուն մեջ՝ աննյութ հով և մշտատն ծփուն ծով  
Գեղեցկությանց մահապարտ... (էջ 149):*

Ապա՝ մշտապես վառվող ջահ այդ ճանապարհին (**«Քանի որ վառ ես Երագ»**) մշտապես բանաստեղծի «հավատքը» պայմանավորող գոյություն.

*Քանի դուն կաս, իմ Երա՛գ, ես կը մնամ նույն տղան,  
Որուն թախիծը դեմքին կօծեն ցոլքեր հավատքի...  
...Քանի որ վառ ես, Երա՛գ, ես միշտ անմահ կը մնամ,  
Ինչպես երբեք չծնած սիրո մ'անուրջը ծփուն... (էջ 149):*

Առաջին ենթաշարքի **«Որպեսզի դուն մնաս միշտ վառ»** և այս ամենավերջին **«Քանի որ վառ ես, Երագ»** բանաստեղծությունները սերտորեն կապվում են իրար և հուշում բանաստեղծի էության մեջ Երագի տևականության մասին: Տևականություն, որ չի ավարտվում այս գրքով, այլ **կյանք և երագ** զուգահեռով, թեև ոչ անպայման ընդգծումներով, անցնում է գրքից գիրք, առաջինից մինչև վերջինը: Անգամ դրամատիկական երկերում: «Կիլիկիո արքան» դրամայի հերոսը՝ Լևոնը, խենթ երագող է: Թող որ երագ, բայց պետք է հավատալ նրա իրականացմանը: Նա իրեն համարում է Կիլիկիո արքա՝ Լևոն Յոթերորդ: «Հավատա և կ'ըլլաս», - ասում է նա: Անգամ արձակ երկերում: «Մպասում սիրո» վիպակի հերոսը՝ Արամը, որ ինքն է պատմում իր սիրո պատմությունը, ինքն է բնութագրում իրեն, ասում է, թե «մինչև այսօր չի կրնար իրականությունը զանազանել երագեն և ընդունել իր ստացած վերքերուն վավերականությունը» (էջ 263): Իր երագած սիրո սպասման մտասնեռումը պատճառ է դառնում, որ սիրած աղջիկը՝ հեռանա իրենից: Տարիներ են անցնում, հասկանում է իր սխալը, բայց «Տակավին կը հավատամ, թե պիտի գա ան՝ որ պիտի գար...»: «Ես դեռ կը սպասեմ...»: Իր երագած, անորոշ սիրուն: Ու «Մինչև այսօր երագի քաղցր սուտը ավելի ճշմարիտ կը թվի, քան կյանքի իրականությունը» (էջ 343)՝ իր խոստովանությունն է: Գուցեն հեղինակի՝ «կյանքի և երագի» հակադրության կամ հաշտեցման մասին մտորումի մի ա յլ տարբերակ: Գրքից գիրք է անցնում բանաստեղծի «Երագը»: Անցնում է «տաք» հովի պես, ջերմ՝ որպես իդ, ցանկություն, կարոտ հայրենական (**«Հայաստան... միակ Երագն անթառամ»**) թե համամարդկային (**«Աշխարհի ցավով հիվանդ է հոգիս»**): Հայրենաբաղձ սրտի կարոտներ ու տենչե ր կան այդ գրքերում (**«Հայրենի աղբյուրներ», «Ես Մասիսը չտեսա», «Կարոտ», «Մայրիկիս»**): Անգամ «Արևամարի» երգերում, անգամ մահվան մասին խորհելիս մտորումը, թե պիտի հեռանա աշխարհից, ծնում է խոր ավստասնք ու ցավ նաև ու հատկապես իր **«վառ երագների»** համար:

*Երագը վառ որ ես տեսա  
Արևուն տակ այս աշխարհի*

*Ինչպե՞ս պատմեմ Հանդերձյալին՝  
Գիշերին մեջ անլուսնկա... (էջ 256):*

Այսպես, բանաստեղծն ապրեց Կյանքի ու Երագի սահմանագծին, «Կյանքն իր երագ մը եղավ և երագն իրեն կյանք», և հոգեկան այս վիճակի արձագանքը նրա պոեզիայում Իշխանի արվեստի մի շատ կարևոր նրբագիծն է՝ արժանի ուշադրության:

**Բանալի բառեր** – *կյանք, երագ, տարագրություն, Միյունք, Հայաստան, բանաստեղծականություն, երկփեղկված հոգի, տեսիլ, ռեալիզմ, ռոմանտիզմ, գրական ավանդներ*

**ВАЗГЕН ГАБРИЕЛЯН – Поэт на грани жизни и мечты.** – В статье рассмотрен спектр размышлений Мушега Ишхана о жизни и мечте, начиная с первой книги и заканчивая последней; особое внимание уделено сборнику «Жизнь и мечта», которому предпослан эпитафия «Моя жизнь была мечтой, а мечта – самой жизнью». Душа поэта, разрываемая мечтой и реальностью, пытается примирить противоположные полюса, более того, обусловить один другим. Жизненные невзгоды порождают мечту, а та вдохновляет увидеть красоту жизни и природы. Душа без мечты слаба, лишена внутренней силы и обречена исчезнуть. В статье показаны особенности поэтического восприятия М. Ишхана и его приёмы воплотить мечту.

**Ключевые слова:** *жизнь, мечта, эмиграция, диаспора, Армения, поэзия, раздробленная душа, видение, реализм, романтизм, литературные традиции*

**VAZGEN GABRIELIAN – Poet on the Border of Life and Dream.** – This article attempts to review Mushegh Ishkhan's spectrum of thoughts on life and dream, from his first book to the last, and especially the *Life and Dream* volume, which has an epigraph stating "My Life Has Been a Dream and the Dream Itself – Life" line. The split soul of the poet on the border of dream and reality tries to reconcile the opposing poles, moreover, to condition one with the other: The suffering of life gives birth to a dream and the dream inspires to see the beauties of life and nature and dedication to people. The driving force is the dream itself because the dreamless souls are weak and powerless, doomed to oblivion, and loss. An attempt is also made to show the peculiarities of the poet's perception and portrayal of reliving his dreams.

**Key words:** *Life, Dream, Emigration, Diaspora, Armenia, Poetry, Split Soul, Vision, Realism, Romanticism, Literary traditions*

Ներկայացվել է՝ 08.04.2020, Գրախոսվել է՝ 14.07.2020, Ընդունվել է տպագրության՝ 24.07.2020